

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 10.12.2018թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 31 (երեսունմեկ) անդամից 25-ը (քսանհինգը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Հովհաննիսյան Օֆելյա Հայկազի** -Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
6. **Մելքոնյան Հովիկ Սենեքերիմի** – Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
7. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
8. **Հովհաննիսյան Արտաշես Ալեքսանի**– Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ+
9. **Ռաֆֆի Քալաջյան Վաղինակի** — Ֆինանսատնտեսական վերլուծությունների ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ- գլխավոր հաշվապահ
10. **Սարգսյան Սամվել Հովհաննեսի** — ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
11. **Սարգսյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
12. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
13. **Մկրտչյան Արթուր Վազգենի** — Ռազմական ամբիոնի պետ
14. **Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
15. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ

16. **Խորհլյան Հովհաննես Գեորգու** – Պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
17. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
18. **Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն
19. **Մարտիրոսյան Լևոն Մովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ
20. **Խաչատրյան Աննա Արմենի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Սոցիալական աշխատանք», 3-րդ կուրսի ուսանողուհի
21. **Ավետիսյան Հրանուշ Կարապետի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 4-րդ կուրսի ուսանողուհի
22. **Ավագյան Էլմիրա Մոսի** — Մանկավարժության ֆակուլտետ, «Մեթոդիկա» 3-րդ կուրսի ուսանողուհի
23. **Հովհաննիսյան Լիլիթ Գոռի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 3-րդ կուրսի ուսանողուհի
24. **Հարությունյան Ստեփան Մերուժանի** — Ռեզմական ամբիոն, «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 2-րդ կուրսի ուսանող
25. **Չարչոլյան Արթուր Էդվարդի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Պատմություն» 2-րդ կուրսի ուսանող

ՕՐԱԿԱՐԳ

1. 2012-2017թթ. ընդունված և այժմ ուսումնառությունը շարունակող ասպիրանտների և հայցորդների ուսումնական գործընթացի մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերբյան

2. Հաղորդում 2018--2019 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերբյան

3. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

2012-2017թթ. ընդունված և այժմ ուսումնառությունը շարունակող ասպիրանտների և հայցորդների ուսումնական գործընթացի մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ անցած գիտական խորհրդի նիստում քննարկված հարցին անդրադարձը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2012-2017թթ. ընդունված և այժմ ուսումնասիրությունը շարունակող ասպիրանտների և հայցորդների կողմից ԿԳ նախարարությանը բողոք-նամակ է հղվել, ըստ որի նրանք անհամաձայնություններ ունեն գիտական խորհրդի 2.11.2018թ.-ի թիվ 05/4 որոշման հետ: Պարոն Սերոբյանը նշեց, որ իրենց կողմից ԲՈԿ-ին նույնպես նամակ է հղվել այս հարցի կապակցությամբ, մասնագիտական միջնորդների հարցի ճշգրտման համար; ԲՈԿ-ի կողմից նամակի պատասխանը արդեն ստացվել է, իսկ նախարարության կողմից հանձնարարվել է բուհի ռեկտորին վերոգրյալ հարցը նորից ուսումնասիրել և լուծում տալ: Այնուհետև պարոն Սերոբյանը շարունակեց, որ քննարկումների արդյունքում եկել են այն եզրահանգումներին, որ 2.11.2018թ.-ի թիվ 05 գիտական խորհրդով հաստատված ուսումնական պլանը մի փոքր ձևափոխման կարիք ունի՝ զուտ դուրս գալով հետազոտողների շահերից: Այն առարկաները, որոնք ավելացել են ուսումնական պլանում պետք է դուրս բերել՝ պահպանելով 180 կրեդիտը: Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ, երբ ինքն ու պարոն Պողոսյանը (բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ղեկանը) նախարարության համապատասխան բաժնի պետի հետ հարցը քննարկում էին այս հրահանգի հետ կապված, մի խախտում արձանագրեցին, որ կրեդիտների համամասնության բաշխվածություն է փոխվում, բայց իրենք ուրիշ ճանապարհ չունեն, այսինքն վերջինս կամ պետք է փոխվի, կամ նոր առարկաներ ավելացվեն: Մի խոսքով, այս գիտական խորհրդով սա հաստատելուց հետո ԿԳՆ պատասխան նամակ պետք է ուղարկել, քանի որ, ինքը կրկնում է, որ ուսանողների կողմից հարցը ԿԳՆ բարձրացնելուց հետո բուհի ռեկտորին նամակով հանձնարարվել է հարցը նորից քննարկել և պատասխան նամակով տեղեկացնել արդյունքների մասին: Այսպիսով, այն ուսումնական պլանում, որը ընդունվել են թիվ 5-րդ գիտական խորհրդի կողմից, ավելացված դիսցիպլինները հանվում են, իսկ կրեդիտների հետ կապված հետազոտողները պրոբլեմ չեն ունենա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ռ. Մարդոսյանը հարց ուղղեց պարոն Սերոբյանին, -այսինքն հին պլաններով ենք աշխատելու:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ ո՛չ, նոյեմբերի 2-ին հաստատված պլանները մնում են ուժի մեջ, քանի որ դրանք նախարարության հրահանգին համապատասխանում են և օրինակելի ուսպլանի հիման վրա է կազմվել, նա հավելեց, որ առաջին կուրսի հետազոտողները հիմա ոչ մի պրոբլեմ չունեն, պրոբլեմը 2013-2016թթ.-ի հետազոտողների հետ է, որոնց ուսումնական պլանները 2016թ.-ին փոփոխվել էին և որպեսզի այս անձինք այլևս պրոբլեմ չունենան, տրվող ակադեմիական տեղեկանքը հիմնավորված լինի, իրենք ֆիքսելու են և հետազոտողների կողմից ուսումնասիրած և անցած դիսցիպլինները ուսպլանում և ակադեմիական տեղեկագրում, նորեր չեն ավելացնում, այսինքն կարելի է ասել սինթեզ է կատարվել ուսումնական պլաններում: Այն ինչ հնով անցել են, ուսպլանում պետք է ֆիքսվել, քանի որ 2016թ.-ին, երբ ուսումնական պլանները փոխվել են, դրանք չեն եղել, որոնք ուսանողը փաստացի անցել է, սակայն դրանք դուրս են հանվել ուսպլանից, այնինչ կա գրանցված մատյան, կատարվել է դասաբաշխում, որոնք բոլորը գրանցվել են:

Պարոն Խորիկյանին հետաքրքրում էր, թե հայցորդների հին անհատական պլանները, որոնք հաստատվել են, դրանցով պետք է իրենք աշխատեն:

Պարոն Սերոբյան,- ո՞ր հինը և շարունակեց, որ ամբողջ հարցը այն է, որ անհատական պլաններն էլ ստացվում է, որ երկու տեսակի են եղել:

Պարոն Խորիկյանը նորից հարցրեց, թե նոյեմբերի 2-ի գիտական խորհրդի որոշումը հիմա բեկանվում է, թե ոչ:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ ո՛չ. չենք բեկանում:

Պարոն Խորիկյանը շարունակեց հարցադրումը, թե հայցորդների անհատական պլաններում ի՞նչ է փոխվել:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ չի փոխվել, սակայն նախկինում անցած առարկաները նույնպես պետք է ֆիքսվեն, որպեսզի ակադեմիական տեղեկանք տալիս իրենք պրոբլեմ չունենան:

Ս. Սարգսյանը դիմելով Պարոն Սերոբյանին, հարցրեց, - Ձեր ասելով օրինակելի պլան ասելով ի՞նչ եք հասկանում, ինչի՞ հետ եք համեմատում:

Պարոն Սերոբյանը նորից անդրադարձավ հին ուսումնական պլանին և թերությունների շտկմանը տրված ժամկետներին և ասաց, որ օրինակելի ասելով ինքը նկատի ունի 2013թ.-ի պլանը, որը գիտական խորհրդով հաստատված է եղել:

Ս. Սարգսյան - Նոյեմբերի 2-ին մինչև այդ որոշումը կայացնելը հարցը ուսումնասիրերք, հետո բերվեր գիտական խորհուրդ, ամեն անգամ այպես կիսատ-պրատ է հարցեր բերվում:

Պարոն Սերոբյանի հարցի ներկայացման համար ձայնը տվեց Ա. Սարգսյանին:

Ա. Սարգսյան - Պարզապես ներկայացնեմ հետևյալը. նախորդ գիտական խորհրդին էլ դա ներկայացվեց և այնպես չէ, որ հարցը համակողմանի չի ուսումնասիրվել, ես գործուղվել եմ ԿԳՆ պարոն Սերոբյանի կողմից, և նախարարությունում խորհրդակցվել է հարցի հետ կապված և ասվել է, որ ելնելով իրավիճակից, քանի որ գիտական խորհրդի կողմից հաստատված ուսպլանների հետ կապված արդեն իսկ անհամատեղելիություն եղել է, բայց հարցին ճիշտ լուծում տալու համար իրենց կողմից առաջարկվել է, որ նախարարության 2010 թ-ի որոշման առնվազն երկու կողմերը գոնե պահպանվեն, երկու կետերի պահպանումը վերաբերում է շեմերին, այսինքն քանի կրեդիտ պետք է հատկացվեր ուսումնական կրթամասին, այն է 36-54 կրեդիտի պահպանումը պետք է լիներ և երկրորդ կետը վերաբերում էր նրան, որ մասնագիտական կրթամասը ընդհանուր ուսումնական կրթամասի կրեդիտների 1/3-ը պետք է կազմեր: Մենք փորձել ենք հենց այս որոշման համապատասխան, ես ներկայացրել եմ անցած գիտխորհրդին մանրամասն, որ պահպանվել են այս երկու սկզբունքները: Քանի որ բողոք է եղել, ինչպես ներկայացրեց պարոն Սերոբյանը ուսանողների կողմից, այժմ նախարարությունում ասում են, որ կարող են այդ տեսակետից ընդառաջ գնալ, բայց դրա արդյունքում մենք շրջանցում ենք ըստ էության նաև երկրորդ կետը, այն է մասնագիտական կրթամասը, որ 1/3-ը պետք է կազմեր, ստացվում է, որ այս կետն էլ իրենց թույլտվությամբ միայն կրթամասերի համամասնությունն է միայն խախտվում:

Ե. Սերոբյան- Ստացվում է, որ այս հարցը մենք վերջնականապես որպեսզի փակենք, այդ ավելորդ առարկաները հանում ենք ու էս ժամանակավոր հատվածի համար, հետո ուսանողները խաղաղ ավարտում են, որ ոչ ոք հետո պրոբլեմ չունենա:

Հ. Խորիկյան - Իսկ ուսանողների բողոք-նամակին գրավոր պատասխան տրվե՞լ է նախարարության կողմից:

Մերոբյան - Ես այսօր նամակը ուղարկում եմ նախարարություն, նախարարությունն էլ նամակը ուղարկում է ուսանողներին:

Ս. Մարգարյան- Հիմա ինչու ենք քննարկում, կարող է նախարարությունը գտնի, որ նոյեմբերի 2-ին ճիշտ ենք վարվել, հիմա նորից ենք քննարկելու:

Ե. Մերոբյան- մենք նոյեմբերի 2-ին ճիշտ ենք վարվել

Ս. Մարգարյան- եթե ճիշտ ենք վարվել ինչու ենք նորից հարցը քննարկում

Ռ. Մարդոյան - Մենք նոյեմբերի 2-ին շտապել ենք:

Ե. Մերոբյան- Մենք չենք շտապել, նախարարությանը մենք ուղարկելու ենք այսօրվա որոշումը:

Ս. Մարգարյան - Անցած անգամ էլ ասեցիք, որ նախարարությունում ասվել է, բանավոր ասում եք, բայց ցուցում չկա, ինչու այն անգամ ուրիշ ցուցում տվեցին, հիմա էլ ուրիշ ցուցում: Գիտխորհուրդը խաղալիք չէ: Հարցը պետք է ադմինիստրատիվ կարգով լուծվի, նոր բերվի գիտխորհուրդ: Եթե նախարարությունը չի պատասխանել պաշտոնապես, ապա պիտի սպասենք:

Ե. Մերոբյան- փորձում ենք լուծումը գտնել, նախարարությունից ինձ ասել են տվեք պարզաբանում, ուղարկեք լուծումները, որպեսզի իրենք էլ պատասխանեն ուսանողների բողոք նամակին:

Ռ. Մարդոյան -ոնց իմանանք այսօրվա որոշումն է ճիշտ, թե մի ամիս անցնի նորից հասկանանք

Ե. Մերոբյան -այդ դեպքում, երբ 3 տարի աշխատում էիք այդ ուսպլաններով կարող է այդ ժամանակ փորձելիք հասկանալ, թե որ որոշումն է ճիշտ: Կարդում եմ բառացիորեն 2015թ.-ի գիտխորհրդի որոշումը. (հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի զեկուցումն ընդունելի գիտություն և ԳՊՄԻ հետազոտողներին տրամադրել 3 ամիս ժամանակ վերոնշյալ թերությունները վերացնելու համար):

Ե. Մերոբյանը նշեց, որ թերությունները կապված են եղել հետազոտական աշխատանքների հետ:

Ս. Մարգարյան- հետազոտողները թերությունները վերացնելու հետ գործ չունեն:

Ե. Մերոբյանը- Բայց հետո դրվել ուսպլան է փոխվել:

Բ. Պողոսյան- Ես ճիշտ հասկացա, որ մեր նոյեմբերի 2-ին հաստատած ուսպլաններով կարող են շարունակել առաջին կուրս ընդունվածները և հետագայում ովքեր կնդունվեն:

Ս. Մարգարյան- Առաջին կուրսերի հետ կապված խնդիր չի եղել, հետևաբար նոյեմբերի 2-ին նրանց հետ կապված որոշում չի կայացվել:

Նոյեմբերի 2-ին երկու հարց է քննարկվել՝ կարգը, կարգի մեջ եղել է ուսպլան նորեկների համար, եթե դրա մասին է խոսքը, այդ դա տարածվում է միայն նորեկների վրա, բայց այս խնդրահարույց 12 հոգու հետ կապված առանձին որոշում է կիրառելի, դա դրանից գատ է ընդունված:

Բ. Պողոսյան- փաստորեն էս պահին նոր որոշում պետք է հանենք, որ այդ ժամանակ հաստատված պլաններից պիտի դուրս հանենք ավելացրած առարկաները և ավելացնենք այն առարկաները, որոնք փաստացի անցել են հայցորդները:

Ե. Մերոբյան- վերջինները ավելացրել ենք արդեն, իրենց փաստացի անցածները բերել ենք նոյեմբերի 2-ի մեջ:

Լ. Մարտիրոսյան- Առաջարկում եմ հարցը դնել քվեարկության

Ս. Մարգարյան- Համաձայն եմ Ձեր առաջարկին, հիմա ինչ որ ասում եք, հիմա փաստի առաջ ենք կանգնել: Հետագայում պետք է նկատի ունենալ, քանի որ խոսակցություններ կան, որ ավելի է բարդացվելու հետազոտողների պաշտպանության հարցերը,

հետևաբար ուսանողներին պետք է բեռնաթափել այդ լրացուցիչ առարկաներն ուսումնասիրելուց: Սովետական շրջանում երկու լրացուցիչ առարկա էր փիլիսոփայությունն ու օտար լեզուն:: Հիմա էլ ինֆորմատիկայի քննություն է ավելացրած, ինձ թվում է, որ այդ սահմանված կրեդիտները պետք է տեղափոխել դեպի հետազոտական աշխատանքները, հրատարակված աշխատանքների գնահատումը և այլն բեռնաթափել, բերել պարզ ձևի, առաջարկում եմ ստեղծել հանձնաժողով այս հարցերը քննարկելու, քանի որ ուսանողը չի հասցնում ատենախոսությունը սահմանված ժամկետներում, ես դա անընդհատ ասում եմ, հետևաբար եթե ավելի բեռնավոր ենք նրան ավելի վատ կլինի վիճակը:

Ե Մերոբյան — Որոշման մեջ, որ նայում ենք, տեսնում ենք, որ 3 թեկնածուական մինիմումից փորձում են անցնել մի քիչ եվրոպական մոդելի և դրել հաշվել ենք, եթե նույնիսկ իրենց առաջարկած հավելվածը լրիվությամբ կատարվի, ապա ընկեր Սարգսյան էնքան փոքր նագրուսկա է էլ կրթամասի վրա ընկած, ինքը ժամանակային առումով փոքր է, բայց անկեղծորեն եթե այդ բոլորը հետազոտողը ուսումնասիրի իրեն մեծ օգուտ է Ես նայել եմ շատ բուհերի ուսումնական պլանները:

Ս. Սարգսյան ես ժամանակին դրել էի գեղեցիկի փիլիսոփայություն, գտնում էի, որ ասպիրանտը պետք է արվեստի հետ ծանոթանա, բայց չընդգրկվեց, այսպես, որ մտածենք շատ առարկաներ կարելի է ավելացնել, օրինակ ինչպես հողված գրել և այլն: Իմ առաջարկն է, որ վերանայվեն ծրագրերը:

Ե Մերոբյան- առաջին կուրսերի համար ես համաձայն եմ, որ նորից նայվի

Ա. Սարգսյան - Ես համաձայն եմ Ձեզ հետ ընկեր Սարգսյան, բայց մենք ունենք 2017թ.-ի նախարարության որոշում, որտեղ որոշակի այդ մինիմալ մասերը կան, Մենք ըստ էության չենք կարող շրջանցել նախարարության որոշումները, կրեդիտների բաշխումը պարտադրված է:

Ս. Սարգսյան- դա օրինակելի բան է, պարտադրանք չկա, ամեն մի բուհում ամեն մասնագիտության համար ընտրում են:

Ե. Մերոբյան- կրեդիտների բաշխումը կարող է թելադրված լինի, ընկեր Սարգսյանի խոսքը անվանացանկին է վերաբերում

Ա. Սարգսյան- Ոչ մասնագիտականի համար կա առարկայացանկ, որտեղից ընտրվում է, բայց որոշակի պարտադրանք կա:

Պարոն Մերոբյանը հարցը դրեց քվեարկության ասելով, որ որոշում ենք , որ մենք նոյեմբերի 2-ի 12 հոգու հետ կապված ավելացրած առարկաները պարզապես հանում ենք, ուսանողներին ավելորդ ծարրաբեռնվածությունից ազատելով ու դրանով ոչ մի բանով չվնասելով նրանց հետագա գիտական աստիճանավորման հետ կապված ամբողջ գործընթացը, որ ոչ մի պրոբլեմի առաջ չկանգնեցնենք նրանց:

ՈՐՈՇԵՑԻՆ

2018թ.-ի նոյեմբերի 2-ին հաստատած 2012-17թթ. ընդունված և այժմ ուսումնառությունը շարունակող ասպիրանտների և հայցորդների ուսումնական պլաններից հանել ավելացված դասընթացները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 25անդամ. կողմ` 22, դեմ` 0, ձեռնպահ` 3:

2. ԼՍԵՑԻՆ՝

Հաղորդում 2018--2019 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին

Պարոն Սերոբյանի կողմից ներկայացվեց 2018-2019 ուսումնական տարում բուհի առկա և հեռակա կրթական ծրագրերով բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքները՝ համեմատություններ անցկացնելով նախորդ ուսումնական տարվա հետ (աղյուսակների տեսքով՝ կցված).

2018-2019 ուստարի

	Դիմորդներ	Հրամանագրվածներ
Առկա բակալավր	157	136
Հեռակա բակալավր	160	131
Մագիստրատուրա	179	173

2017-2018 ուստարի

	Դիմորդներ	Հրամանագրվածներ
Առկա բակալավր	407	324
Հեռակա բակալավր	258	206
Մագիստրատուրա	327	276

2017-2018 ուստարի

	Շրջանավարտներ
Առկա բակալավր	219
Հեռակա բակալավր	249
Մագիստրատուրա	221

Պարոն Սերոբյանը նշեց, որ 2018-19 ուստարում առկա բակալավր դիմել են 157-ը, հրամանագրվածները 136 են, հեռակա բակալավր՝ 160 դիմել են, 131 հրամանագրվել են, մագիստրատուրա համապատասխանաբար՝ 179, հրամանագրվել 173-ը:

2018-19 ուստարում 440 ուսանող ենք ունեցել առաջին կուրսում, համեմատելու համար սասց, որ 2017-18 ուստարում ավարտել են 689 ուսանող /219 առկա բակալավր 249, 221 մագիստրատուրա/ ընդունվածների և ավարտածների տարբերությունը կազմում է 249 ուսանող, նախորդ տարվա հետ համեմատություն էլ կա, թե առկա բակալավր 407 դիմում , ընդունվել են 324-ը, այս տարի 136-ն էր, այս տարի դա պայմանավորված էր շրջանավարտների քիչ թվով, բոլոր բուհերում էլ այս հարցը կար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ս Մարգարյան – ֆինանսական խնդիրներ կառաջանան, թե՞ չէ

Ե. Սերոբյան—Այ՛ն ունենք, այս տարի բացի քիչ ուսանողներից, կորցրել ենք նաև պետպատվերի տեղեր, մինչև հիմա ֆինանսական խնդիրներ չենք ունեցել, աշխատում ենք խիստ խնայողական ռեժիմով, վարկից մնացել է 6 մլն, որը ժամանակացույցով պարտավորությունները մենք կատարում ենք, բայց այս հաստիկացուցակով կարող ենք խնդիրների առաջ կանգնել, քննարկվել է նաև պարզևավճարների հարցը և դեկտեմբերի 21-ին տեսնենք, ինչպիսի հավաքագրում կլինի, եթե 100% -ով կլինի ապա պարզևավճար կլինի:

Մենք գիտենք, որ հոգաբարձուների խորհրդով մեզ թույլ են տվել վարկ վերցնել, բայց դեռ չենք վերցնի, այս վիճակով նոր շինարարության հարց առաջ քաշել չենք կարող:

Մեզ առաջիկայում սպասվում է շատ մեծ փորձություն՝ բուհի հավատարմագրումը, արդեն մի քանի անգամ հավաքվում ենք այս հարցի համար և հասկանում ենք, որ շատ խնդիրներ ունենք այս հարցի հետ կապված: Զարգացման տեսանկյունից իհարկե խոսք լինել չի կարող:

Այնուհետև պարոն Սերոբյանը շարունակեց, որ մինչև իր գալը նախագծանախահաշվարկային աշխատանքներ են կատարվեն Նորկենտ ծրագրով շահած գույքի տեղադրման նպատակով (մոտ 10մլն ՀՀ դրամի արժողությամբ) ռազմական ամբիոնին հարակից տարածքում շինարարական աշխատանքներ կատարելու համար, սակայն գույքը իրենք տեղադրել են գիմնաստիկայի դահլիճում և խուսափել են այդ ծախսերից, բացի այդ նույն Նորկենտ ծրագրով նախատեսվում են համալսարանի բյուջեն գումար բերող աշխատանքներ, ուզում են մի հատ էլ ալպինիստական պատ առնել, որը նույնպես եկամտի աղբյուր կարող է լինել, զբոսաշրջության և մի քանի այդպիսի ոլորտների հետ կապված աշխատանքներ էլ կան:

Ս. Մարգարյան - Մեր նոր բյուջեյի պարամետրերը գիտխորհրդին կտրամադրվի, թե ոչ

Ե. Սերոբյան- Բյուջեն պետք է հաստատվի հոգաբարձուների խորհրդով, բայց ինքը պատրաստ է, որ գիտխորհրդի հետ բաց նիստ լինի և այդտեղ պրոբլեմ չի տեսնում, իսկ ինչ վերաբերում է ընկեր Սարգսյանի և գիտխորհրդի մի քանի անդամների կողմից համալսարանի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ գրավոր առաջարկություններին, ինքը անկեղծորեն կարծում է, որ արդեն հաստատվել է նոր կանոնադրությունը՝ ռեկտորի ընտրության հետ կապված կետը, ինքը չի գտնում, որ հիմա պետք է նոր կառուցվածք մտցնենք, թող գա նոր

ռեկտորը, որին կներկայացվի նոր կառուցվածքային փոփոխությունները և եթե նա գտնի, որ պետք է փոփոխվի, կիրականացնի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաղորդումն ընդունելի գիտություն

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ 25 անդամ. կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գիտական խորհրդի

քարտուղար՝

Պրոռեկտոր-աշխատակազմի

ղեկավար՝

Արհմիութենական

կազմակերպության նախագահ՝

Բնագիտամաթեմատիկական

ֆակուլտետի ղեկան՝

Սոցիալական գիտությունների և

իրավունքի ֆակուլտետի ղեկան՝

Ռազմական ամբիոնի պետ՝

Ուսումնագիտական

խորհրդատվական կենտրոն-

գրադարանի տնօրեն՝

Արտաքին համագործակցության

և հասարակայնության հետ

կապերի կենտրոնի տնօրեն՝

Ֆինանսատնտեսական

վերլուծությունների,

ծրագրավորման և

հաշվապահական հաշվառման

բաժնի վարիչ-գլխավոր

հաշվապահ՝

Անձնակազմի կառավարման և

իրավական ապահովման բաժնի

պետ

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և

տեղեկատվական

Ե. Մերոբյան

Կ. Պետրոսյան

Գ. Նիկողոսյան

Վ. Խաչատրյան

Բ. Պողոսյան

Օ. Հովհաննիսյան

Ա. Մկրտչյան

Թ. Խաչատրյան

Հ. Մելքոնյան

Ռ. Քալաջյան

Ա. Հովհաննիսյան

տեխնոլոգիաների ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
 տեղեկատվական
 տեխնոլոգիաների ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Անգլերեն լեզվի և
 գրականության ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Հայոց լեզվի և գրականության
 ամբիոնի դոցենտ՝
 Մանկավարժության ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Հումանիտար գիտությունների և
 արվեստի ֆակուլտետի դեկան՝
 Միջմշակութային
 հաղորդակցության և
 զբոսաշրջության ամբիոնի
 ասիստենտ՝
 Մանկավարժության ամբիոնի
 դոցենտ՝
 Պատմության և
 փիլիսոփայության ամբիոնի
 դոցենտ՝
 Մանկավարժության ամբիոնի
 դոցենտ՝
 Գիտական
 քաղաքականության, որակի
 ապահովման և կառավարման
 կենտրոնի տնօրեն՝
 Աշխարհագրության,
 կենսաբանության և քիմիայի
 ամբիոնի դոցենտ՝
 ՇՊՀ ՈԻԽ նախագահի ԺՊ,
 Հումանիտար գիտությունների և
 արվեստի ֆակուլտետ,
 «Լրագրություն» 4-րդ կուրսի
 ուսանողուհի՝

Ս. Սարգսյան

Հ. Դրմեյան

Ա. Հովհաննիսյան

Ս. Հայրապետյան

Ռ. Մարդոյան

Թ. Մելիքյան

Շ. Տեր-Աղամյան

Լ. Ղուկասյան

Հ. Խորիկյան

Լ. Հակոբյան

Ա. Սարգսյան

Լ. Մարտիրոսյան

Ջ. Ղազարյան

Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետ,
«Սոցիալական աշխատանք» 4-
րդ կուրսի ուսանողուհի՝
Անգլերեն լեզու և
գրականություն IV կուրսի
ուսանողուհի՝
Մանկավարժության
ֆակուլտետ, «Մեթոդիկա» 4-րդ
կուրսի ուսանողուհի
Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետ,
«Աշխարհագրություն» 4-րդ
կուրսի ուսանողուհի
ՈւԳԸ նախագահ,
աշխարհագրություն II կուրսի
ուսանող (մագիստրատուրա)՝
Ռազմական ամբիոն,
«Նախագորակոչային և
ֆիզիկական պատրաստություն»
4-րդ կուրսի ուսանող՝
Պատմություն IV կուրսի
ուսանող (հեռակա
բակալավրիատ)

Ա. Խաչատրյան

Հ. Ավետիսյան

Է. Ավագյան

Լ. Հովհաննիսյան

Ք. Հարությունյան

Ս. Հարությունյան

Ա. Չարչոլյան